«Ի՞նչ կը լինէր»-ը և «Ծպիտը վառ»-ը. իսկ որպէս բնութեանը պատկեր՝ «Փոթորիկը ծովի վրայ»։

«Սրբազան ժամերում»-ի մէջ էլ հեղինակի լեզուն նոյն թեբութիւններն ունի, ինչ առաջին փորձի մէջ։ «Ես թափառում եմ սիրուց զժահար», «գոռան-գոչէն ալիք», «գեղ յուշ», «գեղ եղր», «կուսերգ» և այլն։ Օրինակները բազմաթիւ են։ Կրկնում ենք պ. Արաբին շնորհք ունի, բայց նա շատ է աշխատում անպատճառ օրիգինալ լինել, բայց այդ նրան չի յաջողւում և նա երբեմն նոյնիսկ հասնում է աբսուրդի, թէ մտքով և թէ լեզուով։ Հարկաւոր է սովորել ընդհանրապէս, աւելի լայն մըտաւոր պատրաստութիւն ձեռք բերել և մանաւանդ հայերէնը մշակել, գեղեցիկ ձևերի ճաշակը զարգացնել։ Եւ յետոյ... մի փոքր համեստութիւն։

Ա. Ահարոնեան

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1) Ե. Թոփչեանի՝ 1965 թ. «Լոյս» պատկերազարդ օրացոյց հանդէս, գինն 1 ր. 20 կոպ.։
2) 1905 «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց», Կ. Պոլիս, գին 10 ղրշ.։
3) Դաբ. Սունդուկեանցի՝ «Պէպո» կատակ. 3 արար. երրորդ տպագ. ուղղած Թիֆլիս 1904. գ. 50 կ։
4) Օ. Շրայնէրի՝ «Անուրջներ» թարգմ. հրատ. Ատրպետի, Թաւրիզ 1904. գ. 15 կ։
5) Ց. Դաղբաշեանի՝ «Լիակատար Բառարան Հայերէնից Ռուսերէն», Ա. պրակ. Թիֆլիս 1904. բաժանորդագինն է 2 ր. 50 կ։
6) Մուշեղ վարդապետի՝ «Դրուագներ», հրատ. Նշան-Պապիկեանի Կ. Պոլիս. 1994. գ. $7^1/_2$ ղրուշ։
7) Զապել Հ. Աստուրի՝ «Ծոլքեր» Քերթուածները, հրատ. Նշան-Պապիկեանի, Կ. Պոլիս, 1904 գ. 5 ղրուշ։
8) Մ. Ա. Պարսամեանի՝ «Անրջանք» Քերթուածներ, հրատ. Նշան-Կարապետեանի. Կ. Պոլիս 1904. գ. 5 ղրուշ։